Ռէն գետոյ եզերքը իւր մշանջենաւոր անունն է՝) Գուանք ցեղին անունէն առնուած լինելով, կը նշանակէ -ՇԻ և (4) մեր լեզուաւ կ'ըսուի Գուէնկ, որ Փրկչական թուականէն մինչև Հասնի Նոյն թուականը՝ Ղալիա (և ի Հնումն Կոլուա զոր մեք ևս կ'անուանենք Հայերէն մինչև ցարդ Գաղղիա) ըսուած Գուանսան պաշարեցին Գուանքները. և ահա այսպէս այդ երկրին մէջ մնաց իրենց անունը, վասնորոյ և կ'ըսուի Գուանսա։

Ալմաններէն ֆաթըր (փէտէր) հայր, մութը (մատէր) մայր, պրուտրը (պիրատէր) եղբայր, և տուխտրը (տուխթէր) դուստր բառերուն պէս կան շատ Պարսկերէն բառեր. մանաւանդ Ալմաններէնի դերբայերը կ'վերջաւորին (թէն) ով, ինչպէս որ կը-վերջաւորին Պարսկերէն դերբայերը։

Մենք ևս յառաջ կ'բերենք աստանօր մեր դիտողութիւն այսպէս. ,,(տուխթէր) Պարսկերէն -ՇԻ ,,ԷՍ ըսել է. Խոսրովիդուխդ՝ կնշանակէ Հայերէն ,,Խոսրովի -ՇԻԷՍ. (Հէվթ) Եղբ. (պիժիշկ) բժէշկ. Ճա-,,(վիտանի) յաւէտեան, (ջար) ջրոս. (շիրին) -ԷՐՈՆ. ,,(քէվրան) կորուստ. (ճէտ) ցեղ որ կ'ըսուի նաև ,,Հայերէն ՏԷՐ, և այլ բազում պարսկերէն բառեր, ,,որոնց հնչմունքն ու արտասանութիւնը կընմանին ,,Հայերէն բառերու Այսնմանութեան նկատմամբ, ,,ամենէն աւելի հետաքրքրական և ուշադիր լի-,,նելու կէտն այն է թէ, Հայերէ՞նն է աւելի հին ,,կեղու՝ թէ պարսկերէ՞նը, և հետեւաբար Հայք ,,աւելի հին ազգ է՞ն, թէ պարսի՞կք. այս հար-,,ցումն է խնդրոյն բովանդակութիւն, որ կամ ,,Հայք Պարսիկներէն, և կամ Պարսիկք Հայոցմէ ,,առած լինին իրենց լեզուին շատ մը բառերը, ,,Սակայն ըստ մեզ դիւրին է խնդրոյն լուծումը ,,երկու ապացուցութեամբ, այսինքն առաջին՝ երբ ,,լինիմք այնպիսի բառից արմատներուն մտադիր՝ ,,զորօրինակ (շիրին) պարսկերէն, և սիրուն հայ-,,երէն բառից մէջ. -ԷՐՈՆ բառին արմատն է -ԷՐ ,,բառը, մինչդեռ (շիրին) բառին արմատը՝ եթէ ,,ըսենք (շիր) այս մտօք երբէք չնշանակէր բան ,,մը, բայց (շիր) ուրիշ իմաստով կ'նշանակէ -ՈՒ-,,Ն-Ի. Նոյնպէս ԲԺԷՇԿ բառին արմատն է Բ-Ժ-Ի ,,կամ Բ-Ժ-Էս զորօրինակ՝ բուժելի, անբուժելի և

4) Հրատարակիչն ըսած է Տաճկերէն լեզուին համար։

,,ամենարուժ, այսպէս նաև Հայերէնի նմանութիւն ,,ունեցող պարսկերէն բառից շատերուն արմատ-,,ները կ'գտնեմք Հայերէն։ Երկրորդ՝ եթէ Հայկ էր ,,Նոյայ թոռան թոռը և Թորգոմայ որդին, ու ,,Հայկազունք կ'խօսէին այն ժամանակն արդի Հա-,,յերէնը կամ նորա խիստ մօտ լեզու մը, ուրեմն ,,անհնար կ'երևի թէ Պարսիկք և իրենց լեզուն՝ ,,Հայոցմէ և Հայերէնէն աւելի հին եղած լինին։ ,,Արդ եթէ Պարսիկք Հայոցմէ հին ազգ չեն, ու-,,րեմն ուրիշ ազգեր և իրենց լեզուն ամենեւին ,,անկարելի կրթուի լինել Հայոց ազգէն հին,,։

Ալմանիոյ և յատկապէս Աւստրիոյ արևելեան երկիրներուն մէջ հռչակուած Նէմցէ անունը կ'ը-նշանակէ Սլաւերէն լեզուաւ համ կամ -ՆԷՇ-, որովհետեւ Սլաւք, այսինքն Ռուս, Ճաճան, Սեր-վիացի, (Պուլկար) և Խրվաթ ժողովուրդք, ի-րենք իրենց Սլաւ՝ այն է Խ-ՈՍ-Ի նշանակող անու-նը տալով, ինչպէս որ ինքզինքներին կ'յայտնեն ի-րարու հետ խօսելուն համար քաղաքակրթեալ և ազգայնութիւն ունեցող ժողովուրդ, զուրկ համա-րիլ կամեր են Ալմաններն ու Աւստրիացիք խօսել, քաղաքակրթութենէ և ազգայնութենէ։

Մ-ՆՇ-Ի. ԹՒ- 1370

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԾՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ։

Հոկտ. 7 — Սինօդի Ս. Էջմիածնի Նորոգ անդամ կարգեցան Արժ. Մեսրոպ Սմբատեան և Յովակիմ Տէր-Գրիգորեան Վարդապետք ի տեղի Գեր. Յովհաննէս Արշակեան և Թադէոս Զիւնական Եպիսկոպոսաց։

,, 16 — Արժ. Կարապետ Վարդապետ Տէր Գալըստեանց ի պաշտօնէ Փոխանորդութեան Աղէքսանդրապոլոյ հրաժարեցուցեալ առաքեցաւ ի միաբանակցութիւն Ս. Վանուցն Գեղարդայ։

,, 23 — Շամախուոյ վիճակի Աւանաշէն գեղջ Աստուածատուր Քահանայն վասն հակառակասէր վարուց և անուղղայ ընթացից՝ դադարեցուցանելով ի քահանայագործութենէ՝ ենթարկեցաւ եկեղեցական ապաշխարանաց ներքև մինչ յուղղութիւն վարուցն։

,, ,, — Աղէքսանդրապոլոյ Աբրահամ Քահանայն Գրիգորեան հակառակ կանոնաց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ խարդախ պսակագրութեան աղագաւ քահանայագործութենէ արգելլով՝ առ դրան եկեղեցւոյ միամեայ ապաշխարանաց ենթարկեցաւ։